ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1 (14), 2007

*ՀՏԴ 891.981.0* *Հայ գրականությ*

# ՀԱՆՃԱՐԵՂ ՊՈԵՏՆ ՈՒ ԱԶՆԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Ս.Ա.Խանյան

Հուշագրությունը գրական այն ժանրերից է, որի շնորհիվ սերունդները զրուցում են միմ հետ, հաղորդելով այնպիսի փաստեր և իրադարձություններ, որ չի կարող անել որևէ գրա ստեղծագործություն: Նշենք, որ, բարեբախտաբար, հայոց գրականության պատմությա զարգացել ու հարստացել է հուշագրությունը, որի միջոցով կարելի է պատկերացում կազ ականավոր գործիչների ապրած դարաշրջանների, անձնական կյանքի, բնավորությունների, վար բարքի մասին: Այսպես, ժամանակակիցների հուշագրությունների օգնությամբ այսօր կարել ամբողջական պատկերացում կազմել հայ ժողովրդի հանճարից սերված մի շարք մեծերի մասին: ուրախալի է, որ այդ մեծությունների շարքում ներկա և ապագա սերունդներին է ներկայացա Եղիշե Չարենցը, որի ծննդյան 110-ամյակի կապակցությամբ 2007 թվականը հայտարարված Չարենցի տարի:

Հայտնի է, որ 1937 աղետալի տարուց սկսած մինչև 1954 թվականը, մինչև անհա պաշտամունքի արդարացի և անհրաժեշտ քննադատությունը, արգելված էր Մեծն Չարեն հարուստ գրական ժառանգությունը: Նրա հավերժախոս ստեղծագործությունները հանված էի դպրոցական և բուհական ծրագրերից, ուստի անհայտ էին նաև նրա կենսագրական կարև տվյալները, շփումները ընտանիքի, հարազատների, ընկերների, շրջապատի հետ: Անել է, թ բանաստեղծ-քաղաքացի Չարենցի ապրած տարիների փոթորկոտ էջերը և բնավորությա յեզերդային գծերը մնացել էին ստվերի տակ:

Համաշխարհային գրականության և գրականագիտության մեջ հաստատված և ընդգծված այն համոզմունքը, որ արվեստագետը կյանքում պետք է լինի այնպիսին, որպիսին իր իդեալակա կերպարներն են: Գրողը պետք է իրավունք ունենա ասելու, որ իր ստեղծած դրական կերպարը հենց ինքն է: Ահա, այս կարևոր պահանջի լուսաբանման ամենաստույգ աղբյուրը հուշագրությունն է:

1954թ. սկսած գտնվել են խրախուսանքի արժանի գործիչներ, որոնք հետաքրքրությամ կիզակետում են պահել Չարենցի մասին հուշագրություններ հավաքելու և տպագրելու գործը: Այդ ուղղությամբ դրվատանքի արժանի է Եղիշե Հովհաննիսյանի վաստակը: Նրա համառ աշխատանքի շնորհիվ 1961թ. Հայպետհրատը լույս ընծայեց «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին» գիրքը: Իհարկե, այդ ժողովածուի բոլոր հուշերը չէին, որ ներկայացված էին վավերագրական հավաստիությամբ, կային փաստական անճշտություններ, ժամանակագրական բացթողումներ, սակայն դրված էր չարենցագիտության այդ բնագավառը ներկայացնող հիմքը: Հենց միայն այն հանգամանքը, որ այդ գրքում զետեղվել էին Ավ. Իսահակյանի, Մ. Սարյանի, Հ. Կոչոյանի, Գ.Մահարու, Ն.Տիխոնովի, Մ. Ռիլսկու, Ի. Էրենբուրգի, Գ. Լեոնիձեի, Ա. Չիքովանու և այլ մտավորականների հուշերը, խոսում է այն մասին, որ պարզ պատկերացում կարելի է կազմել Չարենց-քաղաքացու, Չարենց-ստեղծագործողի բնավորության, խառնվածքի, արարչական ինտուիցիայի մասին: Սակայն դա դեռ մեծ գործի սկիզբն էր: Անվանի գրականագետ Ս. Սողոմոնյանը գրքի առաջաբանում հույս էր հայտնել, որ Չարենցի ֆենոմենը ներկայացնող բոլոր հուշագրությունները պետք է հավաքվեն, ի մի բերվեն, այլապես սերունդները չենների մեծ պոետի ժամանակակիցներին:

Եվ ծնվեց հաջորդ ստվարածավալ ժողովածուն՝ «Հուշեր Եղիշե Չարենցի մասին» խորագրով: Գիրքը կազմողը կրկին Ե. Հովհաննիսյանն էր, խմբագիրը և առաջաբանի հեղինակը՝ գրականագետ Ալմաստ Զաքարյանը:

Կարդում ես ժողովածուում զետեղված ավելի քան յոթ տասնյակ հեղինակների հուշերը, հայացքիդ դեմ հառնում է 20-րդ դարի այն գրական հսկան, որին կարելի է համեմատել միայն իր հետ, որը Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի ներկայությամբ գրական ասպարեզ մտավ որպես առասպելական դյուցազն, յուրացրեց հայ և համաշխարհային պոեզիայի լավագույն ավանդույթները և դարձավ նորագույն շրջանի հայոց

գրականության ռահվիրան, նրա նոր ճանապարհը բացողն ու ուղենիշը, որ գալիքում նա դիմավորելու ստեղծագործող սերունդներին՝ իր հավերժաբաց դպրոցով, իր բազմաժանր հոգևոր հունձքով։

Ե. Չարենցի մասին հուշերը դիմանկարային հյուսվածքներ են՝ կարոտի, հպարտության, ափսոսանքի զգացումներով, ճշմարտապատում երանգներով։ Մանկության տարիներից սկսած մինչև վաղահաս պատանեկություն, իմաստացած պարմանիությունից մինչև երիտասարդական հասունի միջօրե, ծախ մոլորություններից արագ ձերբազատվելուց մինչև «Էպիկական լուսաբաց» և «Գիրք ճանապարհի» արևոտ բարձունքներ, իր իսկ փայփայած գաղափարախոսությունից մինչև աղճատված կինտոյի և նրան ծառայող հրեշների ամենակուլ երախ, Չարենցը ներկայացված է որպես անձնուրաց հայրենասեր, ազնիվ ու տաղանդավոր, հախուռն ու բեղմնավոր անհատականություն, որի նմանները ծնվում են հազվադեպ։

Կյանքում ոչ մի շնորհալի մարդ պատրաստի ոչինչ չի ստանում։ Անհատի մտավոր զարգացումը կապված է աշխատասիրության, նպատակասլացության, վճռականության հետ։ Այդպիսին էր Չարենցը դեռևս աշակերտական տարիներից։ Ապագա մեծ բանաստեղծի դասընկերոջ՝ Արտաշես Ալեքսանյանի «Չարենցը ռեալական դպրոցում» հուշապատումը այդ մասին է վկայում։ Չարենցը ակտիվորեն մասնակցում էր դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, հաճախում էր՝ դասերը սովորած, հարգում էր այն ուսուցիչներին, ումից սովորելու բան ուներ։ Սիրում էր ընկերների հետ զբոսնել Կարսի քաղաքային այգում, լինել ձիարշավարանում, սիրահարված էր իր ծննդավայրին, որի պատկերը մենք տեսնում ենք և «Երկիր Նաիրի» վեպում, և այլ գործերում։

Չարենցը անշահախնդիր ու բարի ընկեր էր։ Այդ մասին է գրում Արտաշեսը նաև այն հանդիպման առիթով, որ տարիներ անց Երևանում տեղի է ունեցել մեծ բանաստեղծի հետ, արժանացել նրա խրախուսանքին՝ մանկագրության բնագավառում։

Չարենցի դպրոցական տարիներին է վերաբերում նաև դասընկերոջ՝ Արամ Չեքանյանի հուշագրությունը։ «Չարենցը անհանգիստ բնավորություն ուներ, - գրում է նա,- յոլա չէր գնում ընկերների հետ, իսկ ես կարողանում էի գտնել նրա հետ վարվելու ձևը»։ Արամը վկայում է, որ Չարենցն իր բանաստեղծությունները հաճույքով էր կարդում ընկերների մոտ։ Նա բացի հայ գրականությունից, հետաքրքրվում էր համաշխարհային պոեզիայով։ «Եղիշեն,- ընդգծում է Արամը,- աշակերտներին զարմացնում էր անսովոր հիշողությամբ։ Հեշտ ու արագ նա յուրացնում էր ռուս մեծ բանաստեղծների ուզածդ ստեղծագործությունը։ Նա անգիր գիտեր ամբողջ Պուշկինը, Լերմոնտովը, Կոլցովը... արտասանում էր Նադսոնին»։ Չարենցը մեծավարի խորհուրդ էր տալիս ընկերներին՝ տիրապետել մայրենի լեզվին։ Արամը վկայում է, որ Չարենցը պաշտում էր Հայաստանին և լավ գիտեր պատմությունը։ Ուշագրավ է նրա հուշը այն մասին, թե ինչպես են Չարենցի հետ հարյուրավոր կիլոմետր ոտքով ճանապարհ կտրել, հասել Անի, հանդիպել ակադեմիկոս Մառին, որ այդ ժամանակ պեղումներ էր կատարում և կազմակերպում թանգարան։ Հուշագրությունում կարդում ենք. «Ես զարմացած հետևում էի, թե ինչպես համարձակ Եղիշեն զրուցում էր ակադեմիկոսի հետ, գիտնականին զարմացնելով իր գիտելիքներով»։

Սրտառուչ ու հետաքրքիր է Ե. Չարենցի նվիրյալ ընկերուհիներից մեկի՝ Կարինե Քոթանճյանի հուշագրությունը։ Մտքի թևերով վերադառնալով Կարսի այգին, Կարինեն ներկայացնում է ապագա հանճարեղ բանաստեղծի հետ 1914թ. հունիսյան հանդիպումը։ Նրանց ծանոթությունը վերածվել է ազնիվ ու ջերմ ընկերության, որ տևել է երկար։ Կարինեն գրում է. «Չարենցը Մոսկվա եկավ 1916թ., աշնանը, եթե չեմ սխալվում, սեպտեմբերի վերջերին և ընդունվեց Շանյավսկու համալսարանի պատմական ֆակուլտետը։ Ապրում էր մի շատ փոքր սենյակում։ Շատ պատկառելի և զգայուն տանտիրուհի ուներ, նա միշտ բողոքում էր, թե Եղիշեն օր ու գիշեր նստած գրում է ու գրում, առանց ամփելու, ընդունելով միայն քաղցր թունդ թեյ, և ուրիշ ոչինչ»։ Ըստ Կարինեի, Չարենցը հենց այդ օրերին գրում էր «Ծիածան» շարքը։ Նյութական սուղ պայմաններում Չարենցը չէր հուսահատվում, սովորում էր ու ստեղծագործում։ Նա Մոսկվայում մնաց մինչև 1917թ. մարտ ամիսը։

Կ. Քոթանճյանը որոշ ժամանակ անց թողնում է Մոսկվան և Չարենցին հանդիպում 1919թ. ամռանը, Կարսում։ Բանաստեղծը ուսուցչության պաշտոն էր ստանձնել շրջակա մի գյուղում։ 1919թ. Կարինեն Երևանում մասնակցում է Չարենցի պոեզիային նվիրված մի միջոցառման, որի ժամանակ զեկուցողը ընդհանրացրել է. «Չգիտեմ կենդանի՞ է գրողը, թե մեռած, բայց նրա երկերից ելնելով կարելի է ասել, որ բանաստեղծը պետք է, որ բոլորած լինի 40 տարին»։ «Ես լուռ լսում էի,- շարունակում է Կարինեն,- հետո, երբ ավարտվեց դասախոսությունը, բարձրացա բեմ և հայտնեցի, որ բանաստեղծը ընդամենը 21 տարեկան է և որ ուսուցչություն է անում Կարսի մոտակա գյուղերից մեկում։ Առաջարկեցին Չարենցին կանչել Երևան»։ Զեկուցողը եղել է պետական գործիչ, անվանի գրականագետ Նիկոլ Աղբալյանը, և նրա օգնությամբ էլ Չարենցը վերադարձել է Երևան և անցել աշխատանքի։

Ականավոր գրող Ստ. Զորյանը իր «Զարենց» հուշերում պատմում է 1918թ. [illegible] ծանոթության և ապա երևանյան հանդիպումների մասին: Զարենցի ծանոթությունը Ստ. Զորյանի հետ տեղի է ունեցել «Մշակ» թերթի խմբագրությունում, որտեղ աշխատում էր Զորյանը: Նա գրում է, որ Զարենցը եկել էր հանդիպելու «Գեղարվեստ» հանդեսի խմբագիր Գարեգին Լևոնյանի հետ: Իմ երբ Զորյանն իմանում է, որ Լևոնյանը գրախոսական է գրել «Դանթեական առասպելի» մասին և արժանի հեղինակը հենց այդ վտիտ տղան է, հիանում է հարազատի ներքին զգացումով: «Ահա քեզ խնկանակ առասպել... Այդ պոեմի հեղինակին ես պատկերացրել էի համեմատաբար տարիքով, բարձրացած կորովարփինդ մի երիտասարդ»: Այնուհետև, խորհրդային տարիներին, նրանց հանդիպումները տեղի են ունեցել Երևանում: Զորյանն ընդգծում է, որ Զարենցը որպես տաղանդավոր բանաստեղծ հնչեցնում էր նոր մոտիվներ, բերում նոր հույզեր, նոր մոտեցումներ նյութերին:

Ստ. Զորյանը բնութագրելով 1920-ական թթ. գրական հակասական մթնոլորտը և ծանր մոլորությունները, ընդգծում է Զարենցի թեժ բնավորությունը: Նա գրական բանավեճերի կենտրոնում էր և չէր կարող անտարբեր մնալ: Կոմունիստների իշխանության օրոք Զարենցը նշանակվել էր լուսժողկոմատի արվեստի բաժնի վարիչ և ամբողջ ուժով նվիրվել էր նոր արվեստի զարգացմանը:

Զորյանը գրում է, որ Զարենցը Մոսկվայում հրատարակված իր երկհատորյակը նվիրել է իրեն և ասել. «Մարդ կարողանա այսպես տասը մեծ հատոր գրի: Կարո՞ղ եմ, ի՞նչ ես կարծում»:

Ըստ Զորյանի, Զարենցի կուռքերից էին Վ. Տերյանը և Հ. Թումանյանը: Զարենցն ասում էր «Ինքնուրույնությունը մեծ բան է: Թումանյանը ինչ գրում է՝ ինքն է: Տերյանը ինչ գրում է՝ ինքն է: Մարդ կարողանա միշտ պահել ինքնուրույնությունը... բայց ամենքին և ամեն անգամ չի հաջողվում»:

Զարենցը հայտնություն էր: Նրա պոեզիան հեղաշրջում մտցրեց 20-րդ դարասկզբի գրականության մեջ: Մեծ բանաստեղծի ազնիվ ու բախտակից Գ. Մահարու հուշերը Զարենցի բնավորությունը և տաղանդի ուժը բացահայտող մասունքներ են: Մահարին, որ ապրել է որբանոցներում, Զարենցին հանդիպել է Երևանի տղաների որբանոցում, որտեղ նա աշխատում էր որպես դաստիարակ: Մահարին գրում է, որ Ն. Աղբալյանի զեկուցումից հետո ինքը ծեռք էր բերել Զարենցի «Երեք երգը», «Ամբոխները խելագարված», «Սոմա» «Դանթեական առասպել» պոեմները: Մահարին բարձր է գնահատում Զարենցի մուտքը պոեզիա: Վեսպերի, Ռոստանիկի, Արմենուհու ստեղծած բանաստեղծական գորշ համապատկերի վրա «Զարենցի անունը պայթեց ռումբի նման», գրում է Մահարին: Դեռ ավելին, Մահարին նշում է, որ նոր էին Զարենցի պոետական աշխարհը, ոիթմը, պատկերներն ու արվեստը:

Զարենցը Մահարու երազած բանաստեղծն ու ընկերն էր: Նա որբանոցում ծանոթանալուց հետո մինչև 1936 թվականը պայքարել, խսկական, ճշմարիտ գրականության դատը պաշտպանել է Զարենցի հետ մեկտեղ: Մահարին իր հուշերում ուղղակի բանդակել է Զարենցին: Նրա հուշերում հառնում է Զարենցը իր ամբողջ ներքին այրումով ու խմայքով, անմիջականությամբ և ազնվությամբ, անզուգական և անմրցակից ստեղծագործական կարողությամբ, հայրենիքին և ժողովրդին ինքնամոռաց նվիրվածությամբ:

Անհանգիստ հոգու տեր անհատականություն էր Ե. Զարենցը: Գ. Զուբարյանի վկայությամբ նա Հայաստանի բանվորա-գյուղացիական համալսարանի առաջին ուսանողներից մեկը դարձավ: Չնայած պաշտոնական աշխատանքային ծանրաբեռնվածությանը նա չէր բացակայում «Հայ գրականության պատմություն» առարկայի դասախոսություններից:

Զարենցագիտության մեջ ուշագրավ ներդրում է Տիգրան Հախումյանի «Եղիշե Զարենց» հուշապատումը: Նրանք ծանոթացել են 1919թ. «Մշակ» թերթի խմբագրությունում: Նորանշանակ խմբագիրը Տ. Հախումյանն էր: Հետագայում այդ ծանոթությունը վերածվել է ջերմ ընկերության: Հախումյանը գրում է. «Զարենցի մեջ, նրա անձնական ապրումների աշխարհում շատ բան կար և Տերյանից, և Սայաթ-Նովայից, բայց և սիրելով նրանց ու գնահատելով, նա հասկանում էր, որ այժմ հարկավոր են ուրիշ նվագներ, ուրիշ խոսքեր, գեղարվեստական արտահայտչականության այլ միջոցներ, և բարկանում էր իր վրա՝ սրտում ունեցած Տերյանի համար ու ըմբոստանում էր նրա դեմ»: Հախումյանը նշում է, որ Զարենցը բարձր է գնահատել իր «Պոեզազուռնա» ժողովածուն և ասել, որ դա «առաջին գիրքն է Տերյանից հետո»:

Հախումյանը իր հուշերում միաժամանակ առաջարկում է. «Հեղինակի այս կտրուկ արտահայտությունը իր գրքի և այն տեղի մասին, որ պատկանում է դրան հայոց բանաստեղծության մեջ, պետք է պարտավորեցնի նրա ստեղծագործության հետազոտողներին խորամուխ լինելու հեղինակային այդ գնահատության, այդ բառերի մեջ: Ասովել նս, որ առանձին քննադատներ այդ չափազանց հետաքրքիր գրքում լոկ տեսնում էին որոշ անառողջ ու օտարամուտ անկումային դպրոցների ազդեցության ինչ-ինչ արձագանքներ և այդ պատճառով ժողովածուն համարում Զարենցի «նահանջը» ռեալիստական դիրքերից: Դա մեծ սխալ էր, և Զարենցին շատ էր վշտացնում:

Այդ օրերին նա բառացիորեն կորցրել էր գլուխը... մթայլ էր ու չարացած, և այդօրինակ տրամադրության համար հիմքեր ուներ»:

Հախումյանը հաստատում է, որ Չարենցը չէր հանդուրժում սահմանափակ, ինքնագոհ մարդկանց: Նա շատ էր կարդում և շատ բան գիտեր և անհագ ծարավի էր գիտելիքների: «Այդ վտիտ մարմնի մեջ,- գրում է նա,- իսկապես բնակվում էր չսանձահարվող դյուցազնական ոգի: Նա սիրում էր պայքար և միշտ անհողդողդ նետվում էր պայքարի»:

Տ. Հախումյանը իր հուշերում ներկայացնում է Չարենցի ստեղծագործական խառնվածքի ևս մի կողմ, որ արժանի է ուշադրության: «Նա,- նշում է Հախումյանը,- գրում էր մեծ մասամբ վատ տրամադրություն ունենալիս, երբ մեկից վիրավորված էր և չէր կարողացել նույն պահին հարվածին տալ արժանի պատասխան: Այդ ժամանակ նա գալիս էր տուն, փակվում իր սենյակում և արտահայտված ցավը, վիրավորանքը կամ զայրույթը շողշողում էր բանաստեղծական ծնչեղ խոսքի ռակե ծուլածոներով»:

Հուշագիրը ընդգծում է, թե ոնց մի անգամ, «Պոեզոզոնայի» հերթական մի քննարկումից հետո, որտեղ շատ արդար և անարդար խոսքեր էին ասվել Չարենցի այն գրքի մասին, որը սիրում էր իր բոլոր գրքերից ավելի, նա նստած էր գայրացկոտ քրթմնջալով, ամբողջ ժամանակ ցնցվելով և, չգիտես ինչու, միշտ լուռ: Բայց հաջորդ օրը նոր, հենց նույն գիշերը մի հարվածով գրված «Ասպետական» պոեմով հայտնվել էր հենց այն ընկերոջ մոտ, որը նախորդ օրը բոլորից ավելի էր «մշակել»: Չարենցը ստիպել էր լսել ամբողջ պոեմը, ապա՝ ոտքի կանգնած, նյարդային շարժումով ծեռագիրը դրել սեղանին՝ ասելով. «Հայհոյել դուք կարող եք,- այդ ես արդեն տեսա: - Հայհոյել կարող եմ և ես, դա դուք էլ գիտեք: Իսկ, ահա՛, այն բանաստեղծները, որոնց դուք պաշտպանում էք, թող այդպիսին գրեն, այն ժամանակ կխոսենք: Մնաք բարով»:

Ե. Չարենցի պոետական ամենասուր և ամենախոր զգացմունքների, գիտելիքների անհուն աշխարհի, հայ գրականության զարգացման հանդեպ ունեցած սրտացավ վերաբերմունքի և այլ առանձնահատկությունների մասին հետաքրքիր հուշեր են գրել լրագրող Մ. Մելիքսեթյանը, աշխարհահռչակ Մ. Սարյանը, մեծանուն Ավ. Իսահակյանը, հայր Վ. Սարոյանը և այլք:

Մ.Սարյանը ցասումով է գրում 1920-30-ական թթ. քաղաքական-գրական հեղձուցիչ մթնոլորտի մասին: Համբակները նեղում էին Չարենցին, իսկ ժողովուրդը սիրում էր նրան: Անմահ նկարիչը պատմում է, թե ինչպես է կարողացել փրկել իր ստեղծած Չարենցի դիմանկարը ոչնչացումից:

Չարենցը անմրցակից արվեստագետ է, տեսաբան ու պրակտիկ: Սարյանը բերում է նրա մի դիտարկումը արվեստի և արվեստագետի մասին. «Եթե նկարիչը պետք է կոշիկ նկարի՝ կոշիկ ցույց տալու համար, ավելի լավ է՝ չնկարի: Այդպիսի գործերը ժողովրդին պետք չեն: Եթե նկարչի մոտ երևում է այս կամ այն վարպետի կրկնողությունը, ավելի լավ է՝ մի ուրիշ գործով զբաղվի: Եթե նկարիչը չի բավարարում ճաշակի այսօրվա պահանջները՝ արհեստավոր է: Եթե նա մեր հողից, մեր ժողովրդի կյանքից, մեզ հուզող հարցերից դուրս մոդեռնիզմ է խաղում, նույնպես արհեստավոր է: Իսկ արվեստի ասպարեզում արհեստավորությունը պատերազմ է»:

Անդրադառնալով Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությանը, Մ. Սարյանը այն համարում է աղոթք, որը կարելի է թե՛ մտքում հյուսել, թե՛ մրմնջալ շշուկով, թե՛ արտասանել բարձրաձայն: «Ես իմ անուշ Հայաստանին»,- ընդգծում գեղագետը,- ավելի շուտ, բոլոր մասշտաբներից դուրս պաննո է: Պաննո՝ հասցված ժողովրդական էպոսի աստիճանին: Դա անհիշելի ժամանակներից եկող Հայասա- Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ պաննո դիմանկարն է: Դա մեր ազգի կենսագրության ու վարքի կենդանի արտացոլանքն է, մեր կրած տառապանքների ու փառփառյած իղձերի, մեր անկումների ու վերելքների, արհավիրքների ենթակա մեր ճակատագրի ու անմեռ մնալու մեր ձգտման գեղարվեստական սինթեզն ու բյուրեղացումն է:

Այդպիսի մի երկ աշխարհ բերելու համար պետք էր ամենաբիչը կիսաստված լինել:

Ե. Չարենցի մասին տպագրված հուշերը անչափ զանազան են ու բազմերանգ, որովհետև նրա տիեզերական ոգին և աստվածաստեղծ սիրտը իրենց մեջ ներառում էին մարդու և մարդկության ճակատագրին, տառապանքին և ակնկալիքներին վերաբերող բոլոր թրթիռներն ու շերտերը: Այդ են վկայում հռչակավոր դերասան Վ. Փափազյանի «Ախ, քիչ տեսա նրան», հայտնի արձակագիր Մ. Շահինյանի «Եղիշե Չարենց», Մեծ Լոռեցու դուստր, գրականագետ Ն. Թումանյանի «Մեր հանդիպումներից», Չարենցի կնոջ՝ Իզաբելլայի «Չարենցի հետ», Վ. Նորենցի «Միշտ կենդանի» և այլ գործիչների հուշերը:

Չարենցի ամբողջ ստեղծագործությունը հայոց հազարամյա մշակույթի պատմությունը հարստացնող և զարգացման մղող բարձրակետերից է: Ինչ վերաբերում է «Ես իմ անուշ Հայաստանի» հրաշքին, դժվար է գնահատել նրա տեղն ու նշանակությունը Հայոց հոգևոր աշխարհում: Այս ճշմարտությունը հաստատելու և կրկին ընդգծելու միտումով բերենք Մեծն Ավ.

Այդ օրերին նա բառացիորեն կորցրել էր գլուխը... մռայլ էր ու չարացած, և այդօրինակ տրամադրության համար հիմքեր ուներ»:

Հախումյանը հաստատում է, որ Չարենցը չէր հանդուրժում սահմանափակ, ինքնագոհ մարդկանց: Նա շատ էր կարդում և շատ բան գիտեր և անհագ ծարավի էր գիտելիքների: «Այդ փոքր մարմնի մեջ,- գրում է նա,- իսկապես բնակվում էր չսանձահարվող դյուցազնական ոգի: Նա սիրում էր պայքար և միշտ առենորեն նետվում էր պայքարի»:

Տ. Հախումյանը իր հուշերում ներկայացնում է Չարենցի ստեղծագործական խառնվածքի ևս մի կողմը, որ արժանի է ուշադրության: «Նա,- նշում է Հախումյանը,- գրում էր մեծ մասամբ վատ տրամադրություն ունենալիս, երբ մեկից վիրավորված էր և չէր կարողացել նույն պահին հարվածին տալ արժանի պատասխան: Այդ ժամանակ նա գալիս էր տուն, փակվում իր սենյակում և արտահայտված ցավը, վիրավորանքը կամ գայրույթը շողշողում էր բանաստեղծական հնչեղ խոսքի ոսկե ծուլածոներով»:

Հուշագիրը ընդգծում է, թե ինչ մի անգամ, «Պոեզոզնայի» հերյուրական մի քննարկումից հետո, որտեղ շատ արդար և անարդար խոսքեր էին ասվել Չարենցի այն գրքի մասին, որը սիրում էր իր բոլոր գրքերից ավելի, նա նստած էր [illegible] թրթմնջալով, ամբողջ ժամանակ ճմլելով և. չգիտես ինչու, միշտ լուռ: Բայց հաջորդ օրը նոր, հենց նույն գիշերը մի հարվածով գրված «Սապենտական» պոեմով հայտնվել էր հենց այն ընկերոջ մոտ, որը նախորդ օրը բոլորից ավելի էր «մշակել»: Չարենցը ստիպել էր լսել ամբողջ պոեմը, ապա՝ ոտքի կանգնած, նյարդային շարժումով ձեռագիրը դրել գրպանը՝ ասելով. «Հայհոյել դուք կարող եք,- այդ ես արդեն տեսա: - Հայհոյել կարող եմ և ես, դա դուք էլ գիտեք: Իսկ, ահա՛, այն բանաստեղծները, որոնց դուք պաշտպանում էք, թող այդպիսին գրեն, այն ժամանակ կխոսենք: Մնա՛ք բարով»:

Ե. Չարենցի արտակարգ ամենասուր և ամենավսեմ զգացմունքների, գիտելիքների անհուն պաշարի, հայ գրականության զարգացման հանդեպ ունեցած սրտացավ վերաբերմունքի և այլ բարեմասնությունների մասին հետաքրքիր հուշեր են գրել լրագրող Ս. Մելիքսեթյանը, աշխարհահռչակ Մ. Սարյանը, մեծանուն Ավ. Իսահակյանը, հզոր Վ. Սարոյանը և այլք:

Մ Սարյանը ցասումով է գրում 1920-30-ական թթ. քաղաքական-գրական հեղձուցիչ մթնոլորտի մասին: Համբակները նեղում էին Չարենցին, իսկ ժողովուրդը սիրում էր նրան: Անմահ նկարիչը պատմում է, թե ինչպես է կարողացել փրկել իր ստեղծած Չարենցի դիմանկով նկարը ոչնչացումից:

Չարենցը անմրցակից արվեստագետ է, տեսաբան ու պրակտիկ: Սարյանը բերում է նրա մի դիտարկումը արվեստի և արվեստագետի մասին. «Եթե նկարիչը պետք է կոշիկ նկարի՝ կոշիկ ցույց տալու համար, ավելի լավ է՝ չնկարի: Այդպիսի գործերը ժողովրդին պետք չեն: Եթե նկարչի մոտ երևում է այս կամ այն վարպետի կրկնողությունը, ավելի լավ է՝ մի ուրիշ գործով զբաղվի: Եթե նկարիչը մի բավարարում ճաշակի այսօրվա պահանջները արհեստավոր է: Եթե նա մեր հողից, մեր ժողովրդի կյանքից, մեզ հուզող հարցերից դուրս մոդեռնիզմ է խաղում, նույնպես արհեստավոր է: Իսկ արվեստի ասպարեզում արհեստավորությունը պատերազմ է»:

Անդրադառնալով Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությանը, Մ. Սարյանը այն համարում է աղոթք, որը կարելի է թե՛ մտքում հյուսել, թե՛ մրմնջալ շշուկով, թե՛ արտասանել բարձրաձայն: «Ես իմ անուշ Հայաստանին»,- ընդգծում գեղագետը,- ավելի շուտ, բոլոր մասշտաբներից դուրս պաննո է: Պաննո՝ հյուսված ժողովրդական էպոսի աստիճանին: Դա անհիշելի ժամանակներից եկող Հայասա- Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ պաննո դիմանկարն է: Դա մեր ազգի կենսագրության ու վարքի կենդանի արտացոլանքն է, մեր կրած տառապանքների ու փայփայած իղձերի, մեր անկումների ու վերելքների, արհավիրքների ենթակա մեր ճակատագրի ու անմեռ մնալու մեր ձգտման գեղարվեստական սինթեզն ու բյուրեղացումն է:

Այդպիսի մի երկ աշխարհ բերելու համար պետք էր ամենարիչը կիսաստված լինել:

Ե. Չարենցի մասին տպագրված հուշերը անչափ զանազան են ու բազմերանգ, որովհետև նրա տիեզերական ոգին և աստվածաստեղծ սիրտը իրենց մեջ ներառում էին մարդու և մարդկության ճակատագրին, տառապանքին և ակնկալիքներին վերաբերող բոլոր թրթիռներն ու շերտերը: Այդ են վկայում հռչակավոր դերասան Վ. Փափազյանի «Ափսոս, քիչ տեսա նրան», հայտնի արձակագիր Մ. Շահինյանի «Եղիշե Չարենց», Մեծ Լոռեցու դուստր, գրականագետ Ն. Թումանյանի «Մեր հանդիպումներից», Չարենցի կնոջ՝ Իզաբելլայի «Չարենցի հետ», Վ. Նորենցի «Միշտ կենդանի» և այլ գործիչների հուշերը:

Չարենցի ամբողջ ստեղծագործությունը հայոց հազարամյա մշակույթի պատմությունը հարստացնող և զարգացման միող բարձրակետերից է: Ինչ վերաբերում է «Ես իմ անուշ Հայաստանի» հրաշքին, դժվար է գերագնահատել նրա տեղն ու նշանակությունը Հայոց հոգևոր աշխարհում: Այս ճշմարտությունը հաստատելու և կրկին ընդգծելու միտումով բերենք Մեծն Ավ.

Իսահակյանի գնահատականը. «Ինձ համար, առանց չափազանցության, բոլորովին օրինական կերպով կասեմ, որ հայ տառերով, հայ բառերով այդպիսի բանաստեղծություն չի գրված հայրենասիրության տեսակետից: Դա եզակի, աննախընթաց բան է: Նույնիսկ կարելի է ասել, որ եվրոպական, համաշխարհային գրականության հայրենասիրական ժանրի բանաստեղծություններում այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խոսքով գրված բան՝ գոնե ես չեմ հիշում»: Չմոռանանք նաև Վ. Սարոյանի իմաստուն խոսքը. «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...»: Չայն մինչև այսօր կնկատենք մեր երկրին, մեր հողին, մեր պատմության նվիրված ամենան գեղեցիկ երգ գովաբանական աղոթքը: «Հայր մեր»-ի նմանվող աղոթք մը»:

Ուսումնասիրելով ժամանակակիցների հուշերը Ե. Չարենցի մասին, գալիս ենք հետևյալ եզրահանգման:

Եղիշե Չարենցը սովորական մահկանացու չէր: Նրա մեջ Վերինը խտացրել է երկրային կյանքով ինքնատիպ ապրելու և տառապելու ուժն ու կամքը և այդ ամենը գեղարվեստորեն վերարտադրելու աստվածային երանգները: Ուստի նրա ոչ միայն պոետական մուտքն էր հայտնություն, այլև ծնունդը: Մարգարեներ ոչ թե դառնում են, այլ ծնվում են: Չարենցի հանճարեղության աստվածամուղ բաժինը այնքան շռայլ և լուսառատ է եղել, որ ֆիզիկապես ծավալվելու ժամանակ չի ունեցել, դրա փոխարեն արարչական անսպառ էներգիայի են վերածվել հոգին ու միտքը:

Ե. Չարենցը հետթումանյանական շրջանի ամենամեծ բանաստեղծն ու մարգարեն է: Նրա հանճարեղության արմատները այնքան առողջ և խոստումնալից էին, որ նրան մղում էին առինքնող խենթության դեռևս դպրոցական տարիներից: Չարենցի հոգևոր թռիչքները այնքան առատ և կայուն էին, որ պատանի հասակում բանաստեղծական իր աստղերը փնջեց և ազդարարեց իր աբեսքեր ճանապարհը:

Հայրենիքի և ժողովրդի հանդեպ ունեցած սերը Չարենցին է անցել մոր կաթի հետ՝ հոր օրհնանքով: Նրա հայրենասիրության երակները ավիշ են առել հայրենի հողից և ժողովրդի ճակատագրից: Այստեղից էլ կարոտաչյա Հայրենիքի հանդեպ նրա կարոտը և դաժանական առասպելի ցավատանջ ճիչը իր զգայուն սրտում:

Ե. Չարենցի համար քաղաքական կողմնորոշումները Լական Լին այնքանով, որքանով ուղղված էին որբ և արնաքամ Նաիրիի փրկությանը: Նա բանաստեղծ-զինվոր էր և զինվոր-բանաստեղծ:

Արվեստի աշխարհում հեղափոխական էր՝ նման այն դյուցազնին, որին չեն դիմանում շղթա և կապանք և ինչ-որ ժամանակ նաև հողը՝ ոտքերի տակ:

Ե. Չարենցի բնավորության մեջ դրսևորված հակասությունները մարդկային նախանձի և չարության հետ ոչ մի կապ չունեին: Նա 1920-30-ական թթ. ամենախոշոր և ուղի հարթող գեղագետն էր, և երբ պայքարում էր իսկական արվեստի համար, ժամանակի հանքավները վայնասուն էին բարձրացնում նրա հանդեպ և օգտվելով անհատի պաշտամունքի պատճառով ստեղծված քաղաքական հեղձուցիչ մթնոլորտից, քարկոծում և հավատարակշռությունից հանում էին նրան:

Ե. Չարենցը անգուգական և անշահախնդիր ուսուցիչ էր երիտասարդ ստեղծագործողների համար: Հայոց գրի և գրքի չհոգնող պրոպագանդիստն ու ամենատես գիտակն էր: Նրա մտահոգությունների աշխարհում մեծ տեղ Լին գրավում եղեռնից փրկված հայոց որբ երեխաները: Նա *մանկավարժ էր բառի ամենաբարձր իմաստով: Նրա տաղաչությունը թևադրվել էր ժողովրդի ճակատագրի հրամայականով:*

Ե. Չարենցի խստապահանջ լինելը ստեղծագործողների հանդեպ, բխում էր ազգային բարձրարվեստ մշակույթի շահերից: Ում մեջ նկատում Լր աստվածային շնորհքը դառնում էր ննցուկ ու հովանի, նպաստում նրա ձևավորմանն ու զարգացմանը:

Ե. Չարենցը հայկական հազարամյա նահապետական ընտանիքի ջատագովն Լր, որից էլ բխում Լին նրա ուշադրությունն ու սերը ընտանիքի և երեխաների հանդեպ:

Ե. Չարենցը համաշխարհային գրականության խոշոր գիտակներից էր: Նա յուրացնում էր աշխարհի անմահ գեղագետների արվեստը՝ նրանց հետ մրցելու նպատակով: Եվ այդ մրցությունը պսակվում էր հաջողությամբ և սեղան նստում նրանց հետ ու զրուցում հավասարապես:

1923թ. գարնանը Ե. Չարենցը Հ. Թումանյանին նվիրած քառյակում ընդգծել է.

Նա մեծ էր հողով, արյունով,- Արմատներ ուներ նա հողում,
Իր երգերը գեղջուկ նաիրցու քրտինքով էր նա ողողում,
Հանճարեղ երգերում նրա իր երկրի արևն էր շողում:-
Նա մեծ էր հողով, արյունով,- Արմատներ ուներ նա հողում:-

Չարենցյան այս գնահատականը վերագրվում է նաև իրեն՝ անմահ Չարենցին:

Ետչարենցյան շրջանի հզոր պոետներից Պ. Սևակը «Վարք Մեծաց» բանաստեղծության մեջ նշել է.

Ուշ-ուշ եմ գալիս, բայց ոչ ուշացած,
Ծնվում եմ նրանք ճիշտ ժամանակին,
Եվ ժամանակից առաջ եմ ընկնում,
Դրա համար էլ չեմ ներում նրանց:

Այս ցավալի երևույթը տեղի է ունեցել նաև Չարենցի հետ:

Չարենցը սիրված հայ ժողովրդի համճարից ու հավատից, հոգու մեջ ամբարեց հազարամյակների կենսափորձն ու իմաստությունը, վառեց ժողովրդի հավաքական ուժի ճանապարհը լուսավորող կանթեղը, դարձավ իր ժամանակի խղճի և մտքի ռահվիրան և զոհվեց ազգային քթամտության, նախանձի, չարության և դաժանության ճիրաններում:

Այսպես, Չարենցի ողբերգական մահից սկսած յոթանասուն տարի շարունակ թե՛ թաքուն և թե՛ բարձրաձայն հնչում է ժողովրդի ափսոսանքի ճիչը, միաժամանակ հպարտության ներքին ձայնը՝ ուրերին նման զերաստղ նվիրելու համար:

Սակայն ո՞վ պետք է պատասխան տա ժողովրդին նման անանց ցավ պատճառելու համար, ո՞վ:

Գոնե հիմա և ապագայում խնելքի զան քաղաքական այն գործիչները, ովքեր դոփելով իրենց թելկահարող գաղափարների կաղապարում, մոլորվում են, դաժանանում, վերածվում անգգամ ռահիճների և մահվան տարբեր ձևերով շարքից հանում եզակի անհատականություններին:

Ո՞վ պետք է պատասխան տա նման հանցագործությունների համար:

Հարցնում է Չարենց ծնող ժողովուրդը և սպասում պատասխանի, միաժամանակ կոչում խոհեմության:

*Ամփոփում*

Հոդվածում նախ ընդգծած է հուշագրության նշանակությունը մեծ երախտավորների ապրած դարաշրջանները, անձնական կյանքը, վարքն ու բարքը իմանալու համար: Նշված է, որ հայ գրականության պատմության մեջ ևս զարգացել է հուշագրությունը, որի հետաքրքիր շարունակությունը հանճարեղ բանաստեղծ Ե.Չարենցի մասին գրված հուշերն են:

1920-1930-ական թթ. մշակութային ասպարեզում եղած համարյա բոլոր հայ եւ օտար անվանի գործիչները, այդ թվում Ավ.Իսահակյանը, Մ.Սարյանը, Հ.Կոջոյանը. Ն.Տիխոնովը, Մ.Ռիլսկին, Գ.Լեոնիձեն, Վ.Փափազյանը, Տ.Հախումյանը եւ շատ ուրիշներ իրենց հուշերում ճշմարտացիորեն ներկայացրել են Չարենցին՝ որպես հայրենասեր քաղաքացի, եզակի անհատականություն, հիանալի ընկեր, ժողովրդանվեր ֆենոմեն:

*Резюме*

В статье отмечается исключительное значение мемуаров в деле ознакомления с эпохой великих представителей культуры, с личной жизнью, характерами и нравами последних.

Отмечено, что в истории армянской литературы также развивался жанр мемуара. Интересным продолжением чего явились мемуары, написанные о гениальном поэте Егише Чаренце.

Почти все знаменитые армянские и зарубежные деятели, творившие в 1920-30гг, в том числе А.Исаакян, М.Сарьян, А.Коджоян, Н. Тихонов, М.Рыльский, Г.Меонидзе, В. Паназян, Т.Ахумян и многие другие в своих мемуарах представили Е.Чаренца как патриота, гражданина, индивидуальность, прекрасного друга, феномена, посвятившего себя народу.

*Գրականություն*


1. Եղիշե Չարենց, Երկեր 6 հատորով, Երևան, 1963-1967.
2. Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1961.
3. Հուշեր Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1986.



*ԱրՊՀ, գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն*